

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի միջև  
բարեկամության և համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետությունը և Ուկրաինան, այսուհետ՝ Բարձր  
պայմանավորվող կողմեր,

հենվելով իրենց ժողովուրդների միջև պատմականորեն ստեղծված  
կապերի, բարեկամական հարաբերությունների և փոխադարձ հարգանքի  
ավանդույթների վրա,

տոգորված իրենց տարածքներում դեմոկրատական անկախ  
պետություններ կառուցելու վճռականությամբ,

համարելով, որ իրենց միջև բարեկամության և փոխահավետ  
համագործակցության հարաբերությունների հետագա զարգացումն ու  
ամրապնդումը համապատասխանում են երկու պետությունների  
ժողովուրդների արմատական շահերին և ծառայում խաղաղության և  
անվտանգության գործին,

հաստատելով իրենց նվիրվածությունը միջազգային իրավունքի  
հանրաձանաչ նորմերին, Միավորված ազգերի կազմակերպության  
Կանոնադրության նպատակներին ու սկզբունքներին, Հելսինկի  
Եզրափակիչ ակտի և Եվրոպայում անվտանգության ու  
համագործակցության խորհրդակցության մյուս փաստաթղթերի  
դրույթներին,

հաստատ համոզված, որ մարդու իրավունքների ու հիմնական  
ազատությունների պահպանումը խաղաղության ու անվտանգության  
ամրապնդման, դեմոկրատիայի և արդարության անբաժանելի պայմանն է,

ճանաչելով իրենց երկկողմն հարաբերություններին որակական նոր  
մակարդակ հաղորդելու և իրենց պայմանագրային հիմքը ամրապնդելու  
անհրաժեշտությունը,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

Բարձր պայմանավորվող կողմերը կզարգացնեն իրենց  
հարաբերությունները ինչպես բարեկամ պետություններ։ Կողմերը իրենց  
հարաբերություններն հիմնում են փոխադարձ վստահության և  
համաձայնության վրա՝ առաջնորդվելով անկախության, պետական  
ինքնիշխանության, իրավահավասարության և միմյանց ներքին գործերին  
չմիջամտելու, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման, ներառյալ Ճնշման  
տնտեսական և այլ միջոցները, վեճերի խաղաղ կարգավորման, մարդու

իրավունքների և իիմնական ազատությունների հարգման, միջազգային պարտավորությունների բարեխսիղձ կատարման և միջազգային իրավունքի այլ հանրաճանաչ նորմերով և սկզբունքներով:

### Հոդված 2

Բարձր պայմանավորվող կողմերը փոխգործակցելու են խաղաղությունն ամրապնդելու, կայունությունն ու անվտանգությունը՝ ինչպես համընդհանուր, այնպես էլ տարածաշրջանային մասշտաբով ամրապնդելու նպատակով: Նրանք նպաստելու են զինաթափման գործընթացը շարունակելուն, ինչպես նաև ՄԱԿ-ի խաղաղարար դերը ուժեղացնելուն: Նրանք ջանքեր կգործադրեն Կողմերի շահերը շոշափող բախումների և այլ իրադրությունների խաղաղ կարգավորմանն աջակցելու համար և այդ նպատակով կանցկացնեն խորհրդակցություններ:

### Հոդված 3

Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է ձեռնպահ մնալ մյուս Կողմի դեմ ուղղված որևէ գործողության կամ միջոցառման մասնակցելուց կամ դրանց աջակցելուց և թույլ չի տա իր տարածքն օգտագործել մյուս Կողմի դեմ ագրեսիա կամ բռնի այլ գործողություններ նախապատրաստելու և իրականացնելու նպատակով:

### Հոդված 4

Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրն իր տարածքում մշտական բնակվող քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց /այսուհետ՝ քաղաքացիներ/, անկախ նրանց ազգային պատկանելությունից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, երաշխավորում է քաղաքացիական, քաղաքական, սոցիալական, տնտեսական ու մշակութային իրավունքներ և ազատություններ՝ մարդու իրավունքների բնագավառում միջազգային հանրաճանաչ ստանդարտներին համապատասխան:

Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը պաշտպանում է մյուս Կողմի տարածքում բնակվող իր քաղաքացիների իրավունքները, հովանավորություն և աջակցություն է ցույց տալիս նրանց՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

### Հոդված 5

Բարձր պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ազգային փոքրամասնություններին պատկանող քաղաքացիների իրավունքների՝ որպես մարդու հանրածանաչ իրավունքների մի մասի հարգում, խաղաղության, արդարության, կայունության ու դեմոկրատիայի էական գործոնն է:

Կողմերը երաշխավորում են ազգային փոքրամասնություններին պատկանող քաղաքացիների՝ մարդու իրավունքների և հիմնական ազատությունների լրիվ ծավալ և արդյունավետ իրականացում, դրանց օգտագործումը առանց որևէ խտրականության և նրանց առջև լիակատար հավասարության պայմաններում:

## Հոդված 6

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են օրենսդրական, վարչական և այլ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել իրենց տարածքում թույլ չտալու ազգային փոքրամասնության պատկանելու հատկանիշով քաղաքացիների որևէ խտրականություն, ինչպես նաև այնպիսի քարոզչություն, որն ազգամիջյան թշնամանք կառաջացներ կամ սպառնալիք կներկայացներ ազգային փոքրամասնությունների գոյության համար:

Կողմերն իրենց տարածքում ապահովում են ազգային փոքրամասնություններին էթնիկական, մշակութային, լեզվական ու կրոնական ինքնատիպությունը և պայմաններ են ստեղծում այն պահպանելու և զարգացնելու համար:

## Հոդված 7

Բարձր պայմանավորվող կողմերը իրավահավասար և փոխահավետ համագործակցություն կծավալեն բարեկամական հարաբերությունների զարգացման ու ամրապնդման, մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաև քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, մշակութային, հումանիտար և էկոլոգիական բնագավառներում: Կողմերն անհրաժեշտ են համարում այդ բնագավառներում համագործակցության համապատասխան համաձայնագրեր կնքել:

## Հոդված 8

Մի Բարձր պայմանավորվող կողմի տարածքում գտնվող մյուս Բարձր պայմանավորվող կողմի պետական գույքի, իրավական անձանց ու քաղաքացիների գույքի իրավական վիճակը կարգավորվելու է գույքի

գտնվելու տեղի Կողմի օրենսդրությամբ, Եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի միջև կնքված համաձայնագրով:

Եթե Կողմերից մեկը հայտարարի մյուս Կողմի տարածքում գտնվող գույքը իրեն պատկանելու մասին, որի նկատմամբ պահանջ են ներկայացնում երրորդ անձինք կամ պետություններ, ապա մյուս Կողմը պարտավոր է այդպիսի գույքը պահելու և պահպանելու բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկել և մինչև դրա պատկանելության հարցի վերջնական լուծումը այն որևէ մեկին չհանձնել առանց պաշտոնական համաձայնության, առանց այդ բանի համար առաջին Կողմի համաձայնության:

Սեփականության վերաբերյալ բոլոր հարցերը, որ շոշափում են Կողմերի շահերը, Ենթակա են առանձին համաձայնագրերով կարգավորման:

#### Հոդված 9

Բարձր պայմանավորվող կողմերը կմպաստեն իրենց միջև գոյություն ունեցող տնտեսական կապերի և առևտրատնտեսական հարաբերությունների փոխահավետ հիմունքով խորացմանն ու ընդլայնմանը:

Կողմերից յուրաքանչյուրը ձեռնպահ կմնա այնպիսի գործողություններից, որոնք կարող են տնտեսական վճար հասցնել մյուս Կողմին:

Բարձր պայմանավորվող կողմերը պայմանավորվել են, որ տնտեսական հարաբերությունների, առևտրային փոխանակման կոնկրետ մեխանիզմները կարգավորելու են համապատասխան համաձայնագրերով:

#### Հոդված 10

Բարձր պայմանավորվող կողմերը տրանսպորտի բնագավառում համագործակցության հետագա զարգացման նպատակով Երկկողմ համաձայնագրերով նախատեսված պայմաններով կմպաստեն տրանսպորտային գործառնությունների իրականացմանն իրենց տարածքում գտնվող ծովային և գետային նավահանգիստների, օդանավակայանների, Երկաթուղային և ավտոմոբիլային ցանցերի միջոցով:

#### Հոդված 11

Բարձր պայմանավորվող կողմերը Երկկողմ Համաձայնագրեր կկնքեն արտարժութային-ֆինանսական հարաբերությունների, առևտրային

փոխանակման, վճարումների, արժեթղթերի և մաքսային հարցերով համագործակցության բնագավառում:

### Հոդված 12

Բարձր պայմանավորվող կողմերը ճանաչում են կրթության, տեղեկատվության, արվեստի, առողջապահության, սպորտի, զբոսաշրջության և այլ բնագավառներում համագործակցության ու փոխանակման անհրաժեշտությունը: Այդ հարցերի վերաբերյալ կողմերը կկնքեն առաջին համաձայնագիր:

Կողմերն ամեն կերպ կիրախուսեն մյուս կողմի լեզվի ուսումնասիրումը, այդ թվում՝ իրենց դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում: Նրանք պետական, տարածաշրջանային ու տեղական մակարդակով կնպաստեն ստեղծագործական կոլեկտիվների, գիտության ու մշակույթի գործիչների, մասնագետների միջև ուղիղ կապերի ընդլայնմանը: Կողմերը կուսումնասիրեն միմյանց տարածքներում երկու պետությունների մշակութային կենտրոններ բացելու հնարավորությունները:

### Հոդված 13

Բարձր պայմանավորվող կողմերը կզարգացնեն համագործակցությունը հիմնավոր և կիրառական գիտությունների, առաջավոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի ոլորտում, ինչպես նաև պաշտպանելու համար երկու երկրների գիտնականների, հետազոտողների, գիտահետազոտական ինստիտուտների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, հիմնարկների, գիտությունների ակադեմիաների և գիտաարտադրական միավորումների անմիջական կապերն ու համատեղ նախաձեռնությունները:

Կողմերն անմիջականորեն և միջազգային կազմակերպությունների միջոցով կհամագործակցեն մտավոր և արդյունաբերական սեփականության նկատմամբ իրավունքների պահպանության հարցերում:

### Հոդված 14

Բարձր պայմանավորվող կողմերը կզարգացնեն համագործակցությունը շրջակա միջավայրի պահպանության բնագավառում՝ նպաստելով այդ ոլորտում գործողություններին և ձգտելով էկոլոգիական անվտանգության միջազգային համապարփակ համակարգի ստեղծմանը:

## Հոդված 15

Բարձր պայմանավորվող կողմերը կիամագործակցեն հանցագործության, այդ թվում՝ միջաետական ու միջտարածաշրջանային բնույթ ունեցող հանցագործության կազմակերպված ձևերի դեմ, ահաբեկչության, օդահենության ու ծովահենության, անլեզավար գաղթի, կաշառակերության ու ֆինանսական ապօրինի գործառնությունների, դրամանենգության, թմրանյութերի և հոգեներգործող նյութերի ապօրինի շրջանառության, գենքի, զինամթերքի, պայմանագրի, թունավոր ու ռադիոակտիվ նյութերի ապօրինի գործառնությունների, մաքսանենգության դեմ պայքարի ոլորտում՝ ներառյալ մշակութային, պատմական ու հնագիտական արժեքների ապօրինի դրւութերում:

## Հոդված 16

Բարձր պայմանավորվող կողմերը կկնքեն միջաետական ու միջգերատեսչական հարաբերությունների՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներում համագործակցելու առանձին պայմանագրեր ու հաճայնագրեր:

## Հոդված 17

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում Բարձր պայմանավորվող կողմերի այն իրավունքներն ու պարտավորությունները, որոնք բխում են երրորդ պետությունների հետ կնքած երկկողմ ու բազմակողմ պայմանագրերից:

## Հոդված 18

Բարձր պայմանավորվող կողմերը անհրաժեշտության դեպքում, սակայն տարեկան առնվազն մեկ անգամ, հերթականությամբ Երևանում ու Կիևում կանցկացնեն սույն Պայմանագրի կատարման հարցերին վերաբերող երկկողմ խորհրդակցություններ և բանակցություններ:

Սույն Պայմանագրի մեկնարանման ու կիրառման առնչությամբ ծագած վեճերը ենթակա են լուծման Բարձր պայմանավորվող կողմերի բանակցությունների միջոցով:

## Հոդված 19

Սույն Պայմանագրի դրույթները լրացվել կամ փոփոխվել կարող են Բարձր պայմանավորվող կողմերի համաձայնությամբ:

## Հոդված 20

Սույն Պայմանագիրը ենթակա է վավերացման Բարձր պայմանագործող կողմերի ներքին օրենսդրությանը համապատասխան և ուժի մեջ կմտնի վավերագրերի փոխանակման օրը:

## Հոդված 21

Սույն Պայմանագիրը կնքվում է հինգ տարով: Դրա գործողությունը հաջորդ հնգամյա ժամանակամիջոցի համար ինքնաբերաբար կերկարաձգվի, եթե Կողմերից ոչ մեկը Պայմանագրի ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ գրավոր չժանուցի Պայմանագիրը չեղալ հայտարարելու իր ցանկության մասին:

## Հոդված 22

Սույն Պայմանագիրը կգրանցվի ՄԱԿ-ի Քարտուղարությունում՝ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 102-րդ հոդվածին համապատասխան:

Կատարված է Երևան քաղաքում 1996 թվականի մայիսի 14-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսականերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարագոր են:

Պայմանագիրն ուժի մեջ է մտել 1997 թվականի մայիսի 29-ից: